

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Ուղեցույց` Հիմնված Թեստի Արդյունքների Վրա

Վերջին Թարմացումները`

7/24/20: Տնային մեկուսացման ժամանակահատվածը 3 օրից փոխվել է 24 ժամի առանց ջերմության: Վարակակիր լինելու ժամանակահատվածը փոխվել է ախտանիշների ի հայտ գալուց առաջ 48 ժամից մինչև 2 օր:

7/1/20: Թարմացվել են COVID-19-ի ախտանշանները և ավելացվել են մեջբերվող փատաթղթերի հղումները:

1. Ինչպե՞ս են Կորոնավիրուսները տարածվում

Այլ շնչառական հիվանդությունների նման մարդու կորոնավիրուսները ևս առավել հաճախ փոխանցվում են վարակված մարդուց հետևյալ եղանակներով.

- Հազալու, փռշտալու կամ խոսելու արդյունքում արտադրված կաթիլների միջոցով:
- Սերտ անձնական շփման միջոցով` ինչպիսին է վարակված անձին խնամելը:
- Վիրուսակիր մակերեսի կամ առարկայի դիպչելուց հետո` նախքան ձեռքերը լվանալը բերանին, քթին և աչքերին դիպչելով:

Որոշ մարդիկ վարակվում են COVID-19-ով առանց որևէ ախտանշանների դրսևորման, բայց կարող են վարակել այլ անձանց:

2. Որո՞նք են COVID-19-ի ախտանշանները

Արձանագրված դեպքերը տատանվում են մեղմ կամ ոչ մի ախտանշաններ ունեցողներից մինչև ծանր հիվանդության դեպքերի, որոնք պահանջում են հիվանդանոցային ընդունելություն, կամ նույնիսկ հանգեցնում են մահվան:

Ախտանշանները կարող են ներառել հետևյալը` ջերմություն կամ դող, հազ, շնչահեղձություն կամ դժվարացած շնչառություն, հոգնածություն, մկանային կամ մարմնի ցավ, գլխացավ, համի կամ հոտառության նոր կորուստ, կոկորդի ցավ, դժվարացած քթային շնչառություն կամ քթարտադրություն, սրտխառնոց կամ փսխոց: Այս ցանկում ներառված չեն բոլոր ախտանշանները:

Եթե ձեզ մոտ զարգանում է ջերմություն, հազ, հևոց, կամ ձեր բժիշկը ասում է, որ, հավանական է, ձեզ մոտ COVID-19 լինի, ապա դուք պետք է [ինքնամեկուսանաք](#) տանը: Եթե ձեզ մոտ զարգանում են վերոնշյալ ախտանշաններից տարբեր ախտանշաններ կամ այլ անհանգստացնող ախտանշաններ, որոնք չկան ցուցակում, խնդրում ենք խորհրդակցել ձեր բժշկի հետ թեստավորման և մեկուսացման անհրաժեշտության մասին:

3. Ես ախտանշաններ չունեի, բայց այնուամենայնիվ COVID-19 համար

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Ուղեցույց՝ Հիմնված Թեստի Արդյունքների Վրա

Թեստավորվեցի, կա՞ որևէ բան, որը ես պետք է անեմ, մինչ սպասում եմ իմ թեստի արդյունքներին:

Մենք խորհուրդ չենք տալիս, որ ախտանշաններ չունեցող մարդիկ COVID-19-ի թեստ հանձնեն, բացառությամբ՝ եթե նրանք [COVID-19-ով հիվանդ որևէ մեկի մտերիմը չեն](#), բայց եթե դուք թեստավորվել եք, չնայած որ ախտանշաններ չունեք, դուք պետք է շարունակեք կիրառել խորհուրդ տրվող ֆիզիկական (սոցիալական) հեռավորության պահանջը, օրինակ՝ տանը մնալը և դրսում եղած ժամանակ մյուսներից առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանելը, մինչև կստանաք ձեր թեստի արդյունքները: Դուք պետք է նաև կտորե դիմակ կրեք ցանկացած անգամ տնից դուրս գալիս և այլ մարդկանց շրջապատում գտնվելիս, որոնք ձեր ընտանիքի անդամ չեն հանդիսանում: Եթե դուք շփվել եք COVID-19-ի կասկածվող կամ հաստատված դեպքի հետ, ապա դուք պետք է մնաք ձեր տանը [կարանտինի](#) մեջ և ուրիշներից հեռու, մինչև ձեր թեստի արդյունքները ստանաք, ապա հետևեք ստորև բերված ուղեցույցին՝ կախված նրանից, թե արդյունքներն ինչպիսին են:

4. Ես ախտանշաններ չունեի, բայց այնուամենայնիվ COVID-19-ի համար թեստավորվեցի և իմ թեստի արդյունքը բացասական է, կա՞ որևէ բան, որը ես պետք է անեմ:

Տնից դուրս գալիս, հետևեք առաջարկվող ֆիզիկական հեռավորություն պահպանելու գործելակերպին. առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն պահպանեք ուրիշներից և կտորե դիմակ օգտագործեք, երբ ձեր տնից դուրս շփվում եք ուրիշների հետ: Կարևոր է նշել, որ թեստի բացասական արդյունքը կարող է նշանակել, որ դուք վարակված չեք եղել թեստը կատարելու ժամանակ, բայց դուք դեռ կարող եք վարակվել հետագայում, ուստի կարևոր է շարունակել կանխարգելիչ միջոցառումներ կիրառելը, ինչպիսիք են ֆիզիկական հեռավորություն պահպանելը և ձեռքերը հաճախ լվանալը:

Կարևոր է նշել, որ եթե դուք [շփվել եք](#) COVID-19-ի կասկածելի կամ հաստատված դեպքի հետ, երբ ստուգվում էիք, ապա դուք պետք է մնաք [կարանտինում](#) ամբողջ 14 օրվա ընթացքում, նույնիսկ եթե ձեր թեստի պատասխանը բացասական ստանաք: Մա պայմանավորված է նրանով, որ վիրուսի ինկուբացիոն ժամանակահատվածը կարող է լինել մինչև 14 օր, և եթե դուք թեստը չեք հանձնել առնչվելուց 14 օր հետո, ուստի թեստի բացասական արդյունքը ավելի վաղ կարանտինային ժամանակահատվածում չի նշանակում, որ դուք վարակված չեք:

5. Ես ախտանշաններ չունեի, բայց այնուամենայնիվ COVID-19-ի համար թեստավորվեցի և իմ թեստի արդյունքը դրական է, կա՞ որևէ բան, որը ես պետք է անեմ:

Եթե նույնիսկ դուք ախտանշաններ չունեք, բայց ձեր թեստի պատասխանը դրական է, ապա

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Ուղեցույց՝ Հիմնված Թեստի Արդյունքների Վրա

Թեստավորման օրվանից հետո առնվազն 10 օր դուք պետք է մնաք տանը հասարակությունից հեռու: Նոր կորոնավիրուսի մասին ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարդիկ կարող են վարակիչ լինել, նույնիսկ մինչև ախտանշանների ի հայտ գալը: Հնարավոր է՝ ձեր թեստն արվել է մինչև ձեր ախտանշանների սկսվելը, կամ որ դուք ընդհանրապես ախտանշաններ չդրսևորեք:

Եթե դուք [շփվել եք](#) COVID-19-ի կասկածելի կամ դրական դեպքի հետ, երբ դուք ստուգվում էիք, ձեզ կարող են ազատ արձակել ձեր թեստից ամիջապես 10 օրը լրանալուց հետո, եթե նույնիսկ սա ձեր [կարանտինի](#) ժամանակահատվածի վերջանալուց ավելի վաղ է, եթե իհարկե դուք ախտանշաններ այդպես էլ չեք դրսևորել: Եթե ձեզ մոտ ի հայտ գան ախտանիշներ, ապա դուք պետք է հետևեք Հարց 6-ում բերված ցուցումներին:

6. Ես ախտանշաններ չունեմ, երբ COVID-19-ի թեստի պատասխանը դրական եկավ, բայց իմ մոտ ախտանիշներ ի հայտ եկան իմ մեկուսացման ժամանակահատվածում: Արդյոք պետք է ավելի երկար մնամ մեկուսացման մեջ:

Ժամանակը կվերադասավորվի, եթե մեկուսացման ժամանակահատվածում ձեզ մոտ ախտանշաններ են զարգանում: Եթե ձեզ մոտ ախտանշաններ զարգանան, ապա դուք պետք է տանը մեկուսացված մնաք առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման ձեր ջերմությունն իջնելուց և ձեր ախտանշանների (օրինակ՝ հազ, դժվարացած շնչառություն), բարելավումից հետո առնվազն 24 ժամ ԵՎ ախտանշանների ի հայտ գալուց հետո առնվազն 10 օր:

Եթե դուք [շփվել եք](#) կասկածվող դեպքի հետ և [կարանտինի](#) մեջ էիք, երբ ձեզ մոտ ախտանշաններ զարգացան, ապա պետք է հետևեք ախտանշաններ ունեցող մարդկանց համար նախատեսված մեկուսացման հրահանգներին:

7. Ես ունեմ ախտանշաններ և հենց նոր եմ COVID-19-ի համար թեստավորվել, կա՞ որևէ բան, որը պետք է անեմ՝ մինչև սպասում եմ իմ թեստի արդյունքներին:

Դուք պետք է տանը մնաք և ինքնամեկուսանաք, մինչև թեստի արդյունքները ստանալը: Տե՛ս [տնային ինամփի](#) վերաբերյալ ուղեցույցը Հանրային Առողջապահության վեբ-կայքում, որում ասվում է, թե ինչպես հոգ տանեք ինքներդ ձեր մասին, քանի դեռ տանն եք և սպասում եք ձեր թեստի արդյունքներին: Տե՛ս ստորև բերված բաժինները, իմանալու համար թե ինչ անել, երբ ստանաք ձեր արդյունքները:

Անպայման տեղեկացրեք ձեր բոլոր մտերիմներին ([կոնտակտներին](#)), որ նրանք ձեզ հետ վերջին շփումից հետո պետք է 14 օր մնան կարանտինի մեջ: Տես՝ [Տնային Մեկուսացման Վերաբերյալ Առողջապահության Գործակալի Հրամանը](#):

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Ուղեցույց՝ Հիմնված Թեստի Արդյունքների Վրա

8. Ես ախտանշաններ ունեմ և COVID-19 համար թեստավորվեցի, բայց իմ թեստի արդյունքը բացասական է, կա՞ որևէ բան, որը ես պետք է անեմ:

Եթե դուք ախտանշաններ ունեք, բայց COVID-19-ի ձեր թեստի արդյունքները բացասական են, այնուամենայնիվ խորհուրդ ենք տալիս տանը մնալ առնվազն 24 ժամ առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման ձեր ջերմությունն իջնելուց, ԵՎ ախտանշանների (օրինակ՝ հազ, դժվարացած շնչառություն) բարելավումից հետո, ԵՎ ախտանշաններն ի հայտ գալուց հետո առնվազն 10 օր:

Կարևոր է նշել, որ եթե դուք [շփվել եք](#) կասկածվող կամ հաստատված դեպքի հետ, երբ ստուգվել էիք, ապա դուք պետք է մնաք կարանտինում ամբողջ 14 օրվա ընթացքում, նույնիսկ եթե ձեր թեստի պատասխանը բացասական է եղել:

9. Ես ախտանշաններ ունեմ և COVID-19-ի իմ թեստի պատասխանն այժմ դրական է, ի՞նչ պետք է անեմ:

Դուք պետք է շարունակեք մնալ մեկուսացման մեջ՝ առնվազն 24 ժամ առանց ջերմիջեցնող դեղորայքի օգտագործման ձեր ջերմությունն իջնելուց և ախտանշանների (օրինակ՝ հազ, դժվարացած շնչառություն) բարելավումից հետո, ԵՎ ախտանշաններն ի հայտ գալուց հետո առնվազն 10 օր: Հետևեք՝ [տնային մեկուսացում](#) հրահանգներին, որը տեղակայված է Հանրային Առողջապահության վեբ-կայքում, ինչպես նաև հետևեք [Տնային Մեկուսացման Վերաբերյալ Առողջապահության Գործակալի Հրամանին](#):

Անպայման տեղեկացրեք ձեր բոլոր [մտերիներին](#), որ նրանք ձեզ հետ վերջին շփումից հետո պետք է 14 օր մնան կարանտինի մեջ: Տես՝ [Տնային Մեկուսացման Վերաբերյալ Առողջապահության Գործակալի Հրամանը](#):

10. Արդյո՞ք պետք է շարունակեմ 6 ոտնաչափ հեռավորություն պահպանել ուրիշներից և կրել կտորից դիմակ, նույնիսկ եթե կարանտինից կամ մեկուսացումից դուրս եմ եկել:

Քանի որ մենք շարունակում ենք ավելին իմանալ նոր կորոնավիրուսի և այն մասին, թե մարդիկ որքան ժամանակ կարող են վարակիչ լինել, ուստի բոլոր մարդկանցից պահանջվում է մյուսներից 6 ոտնաչափ հեռավորություն պահպանել և հասարակական վայրերում կտորից դիմակ կրել՝ անկախ նրանց թեստերի արդյունքից և անկախ այն բանից, թե նրանք կարանտինում կամ մեկուսացման մեջ արդեն եղել են, թե ոչ: